տայք · ասացին 500 քսակ, որպէս խոստացան ծերունիքն, եթէ գործն կատարեալ վերջասցի։ Բեահեայն ասէ, ոչ ապաքէն ասացի թէ խաղալիք են գործք ձեր, զի զ500 քսակն վասն եղեալ իրաց խոստացայք, այլ վասն Բեթղեհէմի և Աստուածածնի զի՞նչ ունիք տալ, եւ պահանջէր 750 քսակ, եւ Հրեայ Սողոմոնն էր միջնորդ, զի ծանօթ իմ ասէր Պատրիարքին և գրեմ առ նա, զի եթէ ոչ հաճեսցի, ես հատուցից փոխան նորա, միայն գործք ձեր կատարեսցին։ Իսկ վարդապետք ոչ կարէին խոստանալ աւելի քան զոր խոստացեալ էին ծերունիքն, և Սարգիս վարդապետ պարզութեամբ ասէ՝ միայն 50 քսակ աւելի խոստանալոյ ունիմք հրաման, վասն որոյ տամք 550 քսակ, և ոչ աւելի · երկարեցան բանք 'ի վերայ այսր իբրեւ ժամ մի մերթ սիրով և մերթ բարկութեամբ։ Տեսեալ վարդապետաց թէ չիք աղատութիւն, ասեն, ակն ունէաք 'ի շնորհս ձեր լինել իրաւախոհ ընդ Ցունաց, այլ բաց 'ի քսակաց զայլ ինչ ոչ լսեմք, զի՞նչ ունիք տալ մեզ, որ այսքան քսակս պահանջէք, Ասեն՝ ըստ մտաց հրովարտակին զբանալի հիւսիսային դրան Բեթղեհէմի, և զբաժանորդութիւն ուխտի Այրին, եւ գերեզմանի Աստուածածնի ընդ Ցունաց։ Ասացին, Դատաւորն Երուսաղէմի առաւել քան զդոսա խոստացաւ տալ մեզ, այլ մեք ոչ առաք յանձն, զի առանց ծանրութեան պարտ է կատարել մեզ զօրէնս և ունել պատկերս և կանթեղս ընկերութեամբ Ցունաց · զարմանք են՝ զի հրովարտակք երկուց աղգաց 'ի մի միտս 'ի մի թուականի եւ 'ի մի յԱրքայէ գրեալ և տուեալ են, ընդէ՞ր ունիցին Ցոյնք զամենայնն, և զրկեսցին Հայք, և ո՞ւր են իրաւունք բաժանորդութեան, երկարատեւ դատաստանն և հրաման Արքայի։ Բեահեայն ասէ՝ զի՞նչ ասէք, ո՞վ յիմարք՝ հայեցարուք 'ի տուրս և 'ի պահանջս ձեր։ Ասացին՝ Հայք ոչ կարեն տոկալ պահանջից ձերոց, և Արքայն ոչ ետ ակն ընչից մերոց, այլ արդարութեամբ լուաւ զդատաստանս մեր և հաճութեամբ երկուց աղգաց ետ հրովարտակ · եթէ յօժարիք խնամով 'ի գործադրութիւն նորին, պատրաստ եմք ճանաչել զպարտաւորութիւնս մեր, ապա թէ ոչ՝ ողջ լիցի Թագաւորն, և 'ի սատկանալ բանից՝ խոժորեալ Բեահեային ասէ՝ դիցուք